

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

20 սեպտեմբերի 1999 թ.
ք. Երևան

N 1493

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԸԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Մինչև «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը *հրամայում եմ*.

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչությունը (այսուհետ՝ ՔԿԱԳ վարչություն) և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինները (այսուհետ՝ ՔԿԱԳ տարածքային բաժիններ) կոչված են ապահովելու քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված իրավական ակտերի պահանջների կատարումը:

2. ՔԿԱԳ վարչության և տարածքային բաժինների գործունեության համակարգում իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալը (այսուհետ՝ Նախարարի տեղակալ):

3. ՔԿԱԳ տարածքային բաժինների կազմակերպական և մեթոդական ղեկավարումն իրականացնում է ՔԿԱԳ վարչությունը:

4. ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչներին, վարիչների տեղակալներին և աշխատողներին աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

5. ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչներ և վարիչների տեղակալներ կարող են նշանակվել իրավաբանական բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, գործնական և անձնական հատկանիշներով կարող են կատարել իրենց վերապահված լիազորությունները:

6. ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչների տեղակալները ՔԿԱԳ տարածքային բաժինների նստավայրերում ունեն ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչներին հավասարեցված լիազորություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 200 հոդվածի երրորդ մասով նախատեսված լիազորության: ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչների տեղակալները պատասխանատու և հաշվետու են ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչներին: ՔԿԱԳ վարչության հետ ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչների տեղակալների փոխհարաբերություններն ապահովվում են ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչների միջոցով:

7. ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչների, վարիչների տեղակալների (այսուհետ՝ ղեկավարներ) և աշխատողների լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ենթակայության կարգով:

8. ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարներին և աշխատողներին տրվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված միասնական նմուշի վկայականներ:

9. ՔԿԱԳ տարածքային բաժիններն ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց անվանմամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գրանցված կնիքներ և դրոշմակնիքներ:

10. Նախարարի տեղակալը՝

ա) ղեկավարում և ենթակայության կարգով վերահսկում է ՔԿԱԳ վարչության և տարածքային բաժինների գործունեությունը.

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին ներկայացնում է առաջարկություն ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարներին և աշխատողներին աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու, անհրաժեշտության դեպքում նրանց այլ տարածքային բաժիններ տեղափոխելու վերաբերյալ.

գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին միջնորդություն է ներկայացնում ՔԿԱԳ վարչության և տարածքային բաժինների ղեկավարներին և աշխատողներին խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

դ) ուսումնասիրում է ՔԿԱԳ վարչության և տարածքային բաժինների գործունեության դեմ բերված բողոքները.

ե) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.

զ) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

11. ՔԿԱԳ վարչության պետը՝

ա) կազմակերպում և վերահսկում է վարչության աշխատանքները.

բ) համակարգում և վերահսկում է ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքները.

գ) կատարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և նրա տեղակալի ցուցումները և հանձնարարականները.

դ) Նախարարի տեղակալին առաջարկություն է ներկայացնում վարչության և ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարներին և աշխատողներին խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

ե) վարչության աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.

զ) իր իրավասության սահմաններում տալիս է ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներ՝ նախապես համաձայնեցնելով նախարարի տեղակալի հետ.

է) ուսումնասիրում է վարչության աշխատողների և ՔԿԱԳ տարածքային բաժինների գործունեության դեմ բերված բողոքները.

ը) իր իրավասության սահմաններում համագործակցում է այլ պաշտոնատար անձանց հետ.

թ) իր լիազորություններն իրականացնելիս ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.

ժ) իր իրավասության սահմաններում կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.

ժա) պատասխանատվություն է կրում վարչության առջև դրված խնդիրների լուծման համար.

ժբ) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

12. ՔԿԱԳ վարչության աշխատողը՝

ա) իրականացնում է վարչության առջև դրված խնդիրները.

բ) կատարում է վարչության պետի ցուցումները և հանձնարարականները.

գ) պատասխանատվություն է կրում իր առջև դրված խնդիրների լուծման համար.

դ) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

13. ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարը՝

- ա) կազմակերպում և վերահսկում է բաժնի աշխատանքները.
- բ) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանների կատարումը.
- գ) կատարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և նրա տեղակալի, ՔԿԱԳ վարչության պետի ցուցումները և հանձնարարականները.
- դ) բաժնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.
- ե) կատարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումները.
- զ) իր իրավասության սահմաններում համագործակցում է այլ պաշտոնատար անձանց հետ.
- է) ուսումնասիրում է բաժնի աշխատողների գործունեության դեմ բերված բողոքները.
- ը) քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ իրականացնելիս ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.
- թ) ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար դիմած անձանց և նրանց ներկայացուցիչների դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.
- ժ) պատասխանատվություն է կրում իր բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.
- ժա) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:
14. ՔԿԱԳ տարածքային բաժնի աշխատողը՝
- ա) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների՝ ժամանակին, լրիվ և ճիշտ կատարումն ապահովող անհրաժեշտ աշխատանքներ.
- բ) կատարում է բաժնի ղեկավարի ցուցումները և հանձնարարականները.
- գ) պատասխանատվություն է կրում իր առջև դրված խնդիրների լուծման համար.
- դ) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ.
15. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1999 թվականի նոյեմբերի 29-ից:
- (15-րդ կետը փոփ. 31.10.99 N 1691)*

Դ. Հարությունյան

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
20 սեպտեմբերի 1999 թ.
Պետական գրանցման թիվ 10299148